Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Շիրակի մարզի « Ծաղկուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի քիմիա (4 դասաժամ), կենսաբանություն(4 դասաժամ), համաշխարհային պատմություն(4 դասաժամ), մաթեմատիկա (5դասաժամ),տեխնոլոգիա (տղաների խումբ 4 դասաժամ), հայոց պատմություն(7 դասաժամ), հայրենագիտություն (1դասաժամ) և ռուսաց լեզու(18 դասաժամ) առարկաների ուսուցիչների թափուր տեղերի համար:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1.Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝նշելով այն աշխատատեղը,որին հավակնում է/Ձև 1 /,

2.Փաստաթուղթ/դիպլոմ/ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26 –րդ հոդվածի 1–ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

3.Անձնագրի պատճենը,

4.Ինքնակենսագրություն/Ձև 4/,

5.Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հաստատող փաստաթղթերի,հավաստագրերի պատճենները/դրանց առկայության դեպքում/,

6.Մեկ լուսանկար 3x4 չափի,

7.Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,

8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերը ընդունվում են 2022թ. նոյեմբերի 16-ից մինչև 2022թ. նոյեմբերի 29-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00–ից 15:00–ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2022թ. դեկտեմբերի 2-ին՝ ժամը 13:00–ին, Շիրակի մարզի Ծաղկուտի միջնակարգ դպրոցում: Հասցեն՝ գ. Ծաղկուտ փողոց 2, շենք N3 :

Տեղեկությունների համար զանգահարել 094-13-56-61 հեռախոսահամարով:

<<Ծաղկուտի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի
տնօրեն՝ Ա. Զուռնաջյան